





= Իմ ըստ գրոց Սբե-ի, գղ. Le sabot d'un cheval.

**ՄԱԹ.** 2132, երես 448, տող 1. Վ-ի?

= Պրս. «Վ-ի-ի» է ծանուցեալ չափ իմն կշռութեան... Այս բառ թուրքերէն ասի Օթ-ն (Գէորգ): Հ. Ալիշան ի Սէ-ն-ն, երես 373, Վ-ի-ի գրած է փոխանակ իտալականին Occhia [= Օգգա] եւ յերես 377 ւ «Վ-ի-ի» (Նոյն)»:

(Վերջ:)



## ՍԱՅԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ, Պատմութիւն հին հայ տա-  
րազին, Վենետիկ 1924, էջ 80, ԺԶ+442:

Այս գործը Հացունիի գրական աշխատու-  
թիւններուն պատկն է: Կարգալու է տեղեքներու  
ցանկը, ուշագրութեամբ զննելու եւ քննելու է  
այն ամէն պատկերներն ու հին դրամները, զո-  
րոնք ամենամեծ խնամքով եւ բազմաթիւ դժուա-  
րութիւններու յաղթելով միայն կրցեր է քովէ  
քով բերել Հեղինակը, այն ատեն կ'իմացուի  
արդէն ըստ բաւականի թէ որչափ լուրջ կեր-  
պով մերձեցած է Հացունիի հայտարարին դժուա-  
րին հարցերուն: Հեղինակին ամենամեծ տարա-  
բախտութիւնն եղած է Եւրոպայի կենդրոնական  
քաղաքներուն՝ ինչպէս Վիեննայի, Պարիսի եւ  
Լոնտոնի մատենադարաններէն օգտուելու բա-  
ւոյական անկարելիութիւնը, որով համեմատա-  
կան քննութեան չէ կրցած հարկ եղած չափով  
տեղ տալ գործին մէջ: Հացունիի զգացած է ար-  
դէն ծանրապէս այս պակասը, զոր զգալի չընե-  
լու կամ գէթ չափով մը հակակշռելու համար  
մտադրութիւնն մասնաւորապէս ազգային աղ-  
բիւրներուն վրայ կենդրոնացուցած է՝ աշխատե-  
լով զանոնք որչափ կարելի է սպառիչ կերպով  
օգտագործելու: Հացունի այս տեսակէտով լիա-  
կան համեմատական օրինակներու առատութեան պա-  
հէ, բայց այս պարագային նկատելու է նաեւ ազ-  
գային աղբիւրներու ծայր աստիճանի աղքատու-  
թիւնն, երբ խնդիրն գլխաւորաբար հին շրջան-  
ներու մասին է:

Գիրքը երկու գլխաւոր մասերու բաժ-  
նուած է. Պատմութիւն Աշխարհական տա-  
րազի, էջ 1—311 եւ Եկեղեցական տա-  
րազի 311—442: Ընդհանուր տեսութենէ մը  
վերջը՝ ուր զգեստ, տարազ, կօշիկ, մազ, մօրուք  
եւ ուրիշ կարգ մը նոյնազգի բառեր կը բացա-  
տրուին եւ անոնց գործածութեան սովորութիւն-  
ներն իրենց այլ եւ այլ ձեւերով եւ նրբու-  
թիւններով համառօտիւ կը պարզուին, կ'անցնի  
Հեղինակը ուղղակի Ուրարտացոց տարազին,  
16—34 զոր իրաւամբ առաջին շրջան կ'ա-  
նուանէ: Ապա ժամանակագրական կարգաւ նա-  
խապարթեւական 35—56, Պարթեւական 56—  
89, Սասանեան 90—163, Հռովմ-Բիւզան-  
դեան 164—173, Արաբական 174 եւ Կիլի-  
կեան շրջաններն իւրաքանչիւրն իր մէջ ուսում-  
նասիրելով կու գայ կը հասնի մինչեւ մեր օրերը՝  
Ուրարտական շրջանէն յիշատակութեան ար-  
ժանի է հոս 6. Պատկեր (էջ 33), ուր կը ներ-  
կայացուի դիցուհի մը եւ անոր առջեւ աղօթողի  
դիւրով ծնրադրած կանացի դէմք մը: Երկուքն ալ  
իրենց նուրբ գծերով եւ գեղեցիկ տարազով ցա-  
տուն ապացոյց են ուրարտական բարձր քաղա-  
քակրթութեան եւ զարգացման: Ուրարտալի է, որ  
Հեղինակը այս առթիւ նկատողութեան առած է  
նաեւ Թեոստիանի եւ Փոլիւզական տարազը,  
որուն ինչպէս ծանօթ է, յարեւման կը հուշա-  
կուի Հերոդոտոսէն նոյն ժամանակուան հայ տա-  
րազը: Փոլիւզականին եւ Ուրարտականին միջեւ  
գէթ որչափ կարելի է տրամադրելի աղբիւրնե-  
րէն դատել, ներքին շատ մեծ աղբիւր մը չկայ՝  
աչքի կը զարնէ միայն զինուորական սաղաւարտ-  
ներու զարմանալի նմանութիւնը, որ հաւանօրէն  
հաստատուած աղբիւր մը կ'ենթադրէ: Չեմ գի-  
տեր ինչ պատճառի համար գրութեանս մէջ  
միտում կայ Փոլիւզականին շատ յման թեոստ-  
դեան տարազին մարական-պարսկական ծագում  
տալ: Յոյն մատենագիրները յունական-պարս-  
կական պատերազմներու վրայ խօսած ժամանակ  
որոշ կերպով կը զանազանեն իրարմէ խնդրի  
նիւթ եղող տարազները:

Հեղինակը ծանրապէս սխալած է Հայտա-  
կան տարազը բոլորովին զանց առնելով: Որչափ  
որ ալ տակաւին բոլորովին ստույգ չէ Հատերու  
եւ Հայերու ցեղակցութիւնը — գէթ այս մա-  
սին մասնագէտները տակաւին անմիաբան են —  
սակայն անհերքելի իրողութիւն է թէ Հայերը  
քաղաքակրթութեն ամենալայն չափով ազդուած  
են Հատերէն եւ՝ Հոռոնիի հատերէնի մասին  
ըրած վերջին նշանաւոր գիտերէն վերջը: